

ԷԴՈՒԱՐԴ ՄԿՐՏՉՅԱՆ

ԽՈՍՈՒՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

Ժողովուրդների պատմական ճակատագրով են ուղեկցվում արվեստի, մշակույթի, մարդկության հոգևոր գանձերի պահպանության ու գնահատության հարցերը:

Պատմական Արցախի տարածքի մի մասը զբաղեցնող այժմյան Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի պատմա-ճարտարապետական հուշարձանները ևս յուրահատուկ «բախտ» են ունեցել:

Թերթում ենք Մակար եպիսկոպոս Բարխուդարյանի «Աղուանից պատմութիւն»-ը և կարդում, որ ԺԱ—ԺԳ դարերում, չնայած «քաղաքական արհաւրալից տագնապներին», պարսիկ ամիրաների և սելջուկ բռնակալների արյունահեղ պատերազմներին, «չօլիների անգութ նահատակութեանց, բանդարգելութեանց և ծանրաբեռն ճնշմանց», Արցախի իշխանները կառուցում են դամբարաններ, վանքեր, որոնք «իւրեանց ժամանակին եղած են լուսաւորութեան բով, Քրիստոնէութեան ջեռուցիկ վառարան, աստուածապաշտութեան խնկելի բնակարան, հաւատոյ, լուսոյ և սիրոյ պաշտպան, և միանգամայն Հայաստանեայց Եկեղեցու ինքնուրոյնութիւն և ուղղափառ դաշնութիւնը անխախտ և անխառն պաշտպանող սրբավայրեր» (հ. Ա, էջ 194):

Հայության այդ հատվածի հազարից ավելի նշանավոր հուշարձաններից, վայրագ հրոսակների ավարածությունների և բնական աղետների պատճառով, քչերն են մնացել անվթար կամ անխորտակ:

Ահա այս գանձերի մասին է պատմում Շահեն Մկրտչյանի «Լեռնային Ղարաբաղի պատմա-ճարտարապետական հուշարձանները» գիրքը, որը հրատարակվել է ՀՍՍՀ պատմական հուշարձանների պահպանության հայկական ընկերության շնորհաշատ նախաձեռնությամբ*:

Գրքի հեղինակ Շ. Մկրտչյանը, տարիներ առաջ աշխատելով Լեռնային Ղարաբաղի մարզային պետական պատմա-երկրագիտական թանգարանում որպես դիրեկտոր, մի շարք թանգարաններ ստեղծելուն զուգընթաց, հնարավորություն է ունեցել անձամբ տեսնելու և մոտիկից ուսումնասիրելու երկրամասի հուշարձանները հավաքելու և ամբողջացնելու դրանց մասին եղած սա-

* Շահեն Մկրտչյանը 1976 թվականից սկսած աշխատակցել է «Էջմիածին» ամսագրին, այժմյան Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի եկեղեցական, պատմա-ճարտարապետական մի շարք հուշարձաններին նվիրված արժեքավոր ուսումնասիրություններով, ինչպիսիք են «Մարտակերտի շրջանի պատմական հուշարձանները», «Էջմիածին», 1976, Բ 45, Գ 48, Զ 56, Է 53, Ը—Թ 46: «Հադրութի շրջանի եկեղեցական և պատմական հուշարձանները, «Էջմիածին», 1977, Գ 40—50: Շուշիի պատմական հուշարձանները, «Էջմիածին», 1979, Գ 50—60:

կավաթիվ տեղեկությունները: Հեղինակի հաշվառմամբ, մարզում արձանագրվել են շուրջ 1200 բնագիտական, պատմական և ճարտարապետական նշանավոր համակառույցներ, վանքեր, եկեղեցիներ, դամբարաններ, բնակավայրեր, ամրոցներ, ինժեներական և կոմունալ բնույթի հուշարձաններ, որոնք կառուցվել են նախնադարում, վաղ և ուշ միջնադարում, ինչպես նաև ԺԸ—ԺԹ դարերում:

Շ. Մ. ՄԿՐՏՉՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՊԱՏՄԱ-ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Հուշարձանների պատմությունը և նկարագրությունը տրված են ըստ շրջանների՝ Մարտակերտի, Հադրութի, Մարտունու, Ասկերանի և Շուշի քաղաքի: Վերջում զետեղված են նշանավոր կառույցների, խաչքարերի կամ այլ բաղադրամասերի շուրջ 60 լուսանկարներ:

Գրքում պատշաճ տեղ է հատկացված հայ ճարտարապետության «հանրագիտարան» Գանձասարին, «աշխարհում պահպանված քրիստոնեական ամենահին համալիրին»՝ Դադի կամ Խութա վանքին, բազում անգամ ավերված, բայց «վերստին վերակառուցված» Ամարասին (կառուցված Դ դարում), քաղաքամայր Անիի՝ Բագրատունյաց ոճով կառուցված Գոչավանքին, Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ եկեղեցուն, պաշտպանական հզոր ամրոցներ Շուշ ղնահ-ին և Ջրաբերդին: Հատկապես պատկերավոր են նկարագրված հնագույն ժամանակներից հասած, նշանավոր Ազոխ կոչվող քարանձավը և նրա ստորգետնյա հեթիաթային «պալատների» ճարտարապետությունը: Հեղինակը նկարագրում է նաև այն բոլորը, ինչ կապված է Շուշվա խանության հետ, «ռուս» և ռուսական ծագում ունեցող այլ բառերով կոչվող այն հուշարձանները, որոնք նվիրված են ռուս մեծ ժողովրդի, նրա ազատարար զինվորի հիշատակին, իբրև ղարաբաղցիների երախտագիտության արտահայտություն:

Աշխատության հեղինակը, հենվելով գիտական գրականության և փաստական ուսումնասիրության վրա, ստեղծել է Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի պատմա-ճարտարապետական հուշարձանների առաջին համահավաք գիրքը, որն առաջին անգամ գիտական շրջանառության մեջ է դնում մի քանի տասնյակ հուշարձանների պատմությունը: